ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՎԱԾ ԼԵԶՎԱԲԱՆ ՓԱՌԱՆՁԵՄ ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆԻ ԱՄՈՒՍՆՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՅԱՑԱԾ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋԱԴԵՊԻ ՀԵՏ

04.05.2017 18:38

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը հայտնում է իր մտահոգությունը Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող լեզվաբան Փառանձեմ Մեյթիխանյանի ամուսնու՝ Եղիշե Խաչատրյանի սպանության գործով դատական նիստի ժամանակ տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ:

Ցավոք, մեր հասարակության (այդ թվում՝ պետական պաշտոնատար անձանց) մոտ շատ հաճախ, փաստաբանը նույնացվում է իր վստահորդի հետ, իսկ վերջինիս գործունեությունը բնութագրվում է, որպես՝ արդարադատությանը խոչընդոտող:

Իրականությունը սակայն այլ է. քրեական գործերով փաստաբանը, իր մասնագիտական գործունեությամբ պայմաններ է ստեղծում դատարանի կողմից արդարադատություն իրականացնելու համար: Բնական է, որ մեղադրանքի կողմին (այդ թվում՝ տուժողին) հաճելի չի լինի մեղադրյալի օգտին փաստաբանի կողմից իրականացվող գործողությունները, և հակառակը՝ մեղադրյալին հաճելի չի լինի մեղադրանքի կողմի (այդ թվում՝ տուժողի) ի վնաս իրեն կատարվող գործողությունները, սակայն դրանում է կայանում մրցակցային դատավարությունը:

ՀՀ փաստաբանների պալատը դատապարտում է նշված դատական նիստի ժամանակ ներկա գտնվող անձանց կողմից փաստաբան Ինեսսա Պետրոսյանին վիրավորելու վարքագիծը:

ՀՀ փաստաբանների պալատը մտահոգություն է հայտնում առ այն, որ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը դատավարության պատշաճ պայմաններ և դատավարության մասնակիցների անվտանգությունը չի ապահովում:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })